

ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Ստյոպա Սաֆարյանի 2009թ. դեկտեմբեր ամսվա հաշվետվություն

Ելույթներ ԱԺ ամբիոնից

7.12.09 Ելույթ «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հանգուցալուծումը զինված հակամարտության վերածելու Ադրբեջանի պատասխանատվության մասին» ՀՀ ԱԺ հայտարարության նախագծի քննարկումը մինչև 90 օր հետաձգելու վերաբերյալ:

Ելույթ Աֆղանստանում Միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ նամակների փոխանակմամբ կնքվող համաձայնագրի վերաբերյալ:

Հարց «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ:

Ելույթ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ:

Հարց «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ:

8.12.09 Հարց Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամ ընտրվելու համար մրցութային փուլերն անցած թեկնածուներ՝ Կորյուն Առաքելյանին, Գևորգ Հարությունյանին, Արամ Մելքոնյանին, Արմեն Մկրտչյանին եւ Կարեն Վարդանյանին:

8.12.09 Հայտարարություն

9.12.09 Ելույթ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամների ընտրության վեճաբերյալ խմբակցության տեսակետի ներկայացում:

9.12.09 Հարց «ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին մշտադիտարկում (մոնիթորինգ) իրականացնելու հանձնարարություն տալու» մասին ԱԺ որոշման նախագծի վերաբերյալ:

10.12.09 Ելույթ «ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին մշտադիտարկում (մոնիթորինգ) իրականացնելու հանձնարարություն տալու» մասին ԱԺ որոշման նախագծի վերաբերյալ:

10.12.09 Հարց «ՀՀ 2010թ. պետական բյուջեի մասին» նախագծի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարին:

Ելույթներ «Խորհրդարանական ժամ» հաղորդաշարով

6.12.09 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը «Խորհրդարանական ժամ» հաղորդաշարում ներկայացրեց խմբակցության մտահոգությունները շաբաթվա ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ:

Հանդիպումներ միջազգային կազմակերպությունների հետ

1.12.09 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը Հայաստանում Ռումինիայի դեսպանի հրավերով մասնակցեց Ռումինիայի ազգային տոնի կապակցությամբ «Էրեբունի պլազա բիզնես կենտրոնում» կազմակերպված միջոցառմանը:

ՋԼՍ-ներ

Մամուլի ասուլիսներ

- 3.12.09 «Փաստարկ» ակումբում «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը հանդիպեց լրագրողների հետ՝ խոսելով տարածաշրջանային զարգացումներում ՆԱՏՕ-ի դերակատարման վերաբերյալ:
- 15.12.09 «Արցախ» ակումբում «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը հանդիպեց լրագրողների հետ՝ խոսելով Թուրքիայի կողմից հայ-թուրքական արձանագրությունների վավերացման հեռանկարի մասին:
- 22.12.09 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը, Լարիսա Ալավերդյանը, Անահիտ Բախշյանը և Ջարուհի փոստանջյանը Ազգային ժողովում հանդիպեցին լրագրողների հետ՝ ներկայացնելով «Ժառանգություն» խմբակցության պատգամավորների 2009 թվականի տարեկան հաշվետվությունը:

Հարցազր. մամուլ

- 2.12.09 Աժ պատգամավոր Ստյոպա Սաֆարյանը հարցազրույց տվեց «Երրորդ ուժ» օրաթերթին՝ տալով մեկնաբանություններ Աթենքում ԵԱՀԿ արտգործնախարարական նիստի ժամանակ Հայաստանի եւ Ադրբեյջանի արտգործնախարարների համատեղ հայտարարության վերաբերյալ:
- 3.12.09 Աժ պատգամավոր Ստյոպա Սաֆարյանը հարցազրույց տվեց «Armenia now» պարբերականին՝ ներկայացնելով նոր կառուցվող ատոմակայանի վերաբերյալ «Ժառանգություն» կուսակցության դիրքորոշումը:
- 8.12.09 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը հարցազրույց տվեց «7 օր» էլեկտրոնային պարբերականին՝ անդրադառնալով «Ժառանգություն» կուսակցության հայտարարության վերաբերյալ «Գլենդել Հիլզ» կազմակերպության արձագանքին:
- 9.12.09 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը հարցազրույց տվեց «News.am» և «Իրավունք Դե Ֆակտո» պարբերականներին՝ մեկնաբանելով Օբամա-Էրդողան հանդիպման արդյունքների հայ-թուրքական արձանագրությունների վավերացման վրա ունենալիք հնարավոր ազդեցությանը:
- 28.12.09 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը հարցազրույց տվեց «Արմենդիա» գործակալությանը՝ խոսելով ՆԱՏՕ-ի խորհրդարանական Վեհաժողովում կատարված և կատարվելիք աշխատանքների մասին:
- 28.12.09 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը հարցազրույց տվեց «Կավկասկի ուզել» պարբերականին՝ կանխատեսումներ անելով 2010 թվականին արտաքին քաղաքականության ոլորտում:
- 28.12.09 Աժ պատգամավոր Ստյոպա Սաֆարյանը հարցազրույց տվեց «Armenia Now» էլեկտրոնային պարբերականին՝ տալով մեկնաբանություններ թիվ 10 ընտրատարածքում Նիկոլ Փաշինյանի նախընտրական շտաբի ակտիվիստներին ծեծի ենթարկելու փաստի կապակցությամբ:

Ռադիո

- 2.12.09 «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը հարցազրույց տվեց «Ազատություն» ռադիոկայանին՝ մեկնաբանելով Աթենքում ԵԱՀԿ նախարարական զագաթաժողովի եւ Լեռնային Ղարաբաղի խնդրի կապակցությամբ ընդունված հայտարարությունը:

Հեռուստատեսային հարցազրույց

- 14.12.09 «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության «Երկիրն այսօր» հաղորդաման ժամանակ խոսեց Թուրքիայում քրդական կուսակցության փակման և հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացի վրա հնարավոր ազդեցությունների մասին:
- 21.12.09 «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ներկայացնող պատգամավոր Գագիկ Մելիքյանի, «Հայ Հողափոխական Դաշնակցություն» կուսակցությունը ներկայացնող պատգամավոր Հչայր Կարապետյանի և Հայ Ազգային Կոնգրեսի ներկայացուցիչ Վլադիմիր Կարապետյանի հետ մասնակցեց «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության «Հրապարակ» հաղորդամանը՝ ամփոփելով 2009 թվականի ընթացքում կատարված աշխատանքները:

Մասնակցություն շնորհանդեսներին

- 28.12.09 «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը մասնակցեց Համայնքների ֆինանսիստների միավորման կազմակերպած «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2007 և 2008թթ)» Գիրք 3-ի շնորհանդեսին:

Դասախոսություններ

- 8.12.09 «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության ղեկավար Ստյոպա Սաֆարյանը «Երիտասարդ առաջնորդների աշնանային դպրոցում» դասախոսություն կարդաց «Հայ-թուրքական արձանագրությունների քննարկման» թեմայով: